

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒՄԸ

Նար-Դոսի «Աննա Սարոյան» նամակագրական վիպակում*

Բանալի բառեր – անձնասպանություն, հոգեվերլուծություն, ներհայեցողություն, հոգեբանություն, կենսաձև, կամային որակներ, ինքնաբացահայտում, նամակագրական վիպակ, վարքաբանություն, միջտեքստայնություն:

Մուտք

Նար-Դոս գրողի անձը, գրականությունն ու գրելաձևը բնութագրելիս բազմիցս են օգտագործվում «պարզ» և «պարզություն» բառերը: Հիրավի, նրա գրականությունը զերծ է ամեն տեսակի ավելորդաբանությունից: Նա տարօրինակ գրող է բառի ամենադրական իմաստով: Ափիբերան զարմանք է հարուցում այն իրողությունը, որ հայ քննադատական ռեալիզմի հոգեբանական ուղղության նշանավոր այս ներկայացուցիչը 21-րդ դարում հայտնվել է ստվերում: Երևույթ, որն արդարացի չէ և ո՛չ մի առումով: Ժամանակակից մարդն ավելի քան երբևէ, ունի Նար-Դոսի գրականության կարիքը:

Նրա գրեթե բոլոր երկերի («Մեր թաղը», «Աննա Սարոյան», «Պայքար», «Մահը», «Սպանված աղավին» և այլն) գաղափարական ենթաշերտերում ուսումնասիրության է ենթարկվում մարդն իր դրական ու բացասական, հասկանալի ու հակասական կողմերով: Պատկերելով մարդուն՝ նա կենդանագրում է նաև նրա ժամանակը, որից, իհարկե, շատ տարիներ են անցել, սակայն երևույթների և իրողությունների նկատմամբ ունեցած մարդկային դատողություններն ու ընկալումները, կարելի է ասել, մնացել են նույնը:

Աննան ինքնասպանություն գործեց, աշխարհը կորցրեց մարդու ևս մի գույն ու տեսակ, բայց կյանքի վատորակ և մարդատյաց օրենքներն ու սահմանված նորմերը գործում են նաև այսօր: Ժամանակակից մարդը խուճապահար է լինում ամեն մի չնչին իրողությունից և հուսահատ դրությունից դուրս գալու ելքը կարծես գտնում է ինքնասպանության մեջ: Այս իմաստով

* Հոդվածն ընդունվել է տպագրության 5. 01. 2018:

Նար-Դոսի «Աննա Սարոյանը» մեր օրերում ունի արդիական հնչեղություն և կենսական հարցադրումներ:

Բնավ չսովերելով նարդոսագիտության ձեռքբերումները և չհավակնելով սպառիչ խոսք ասելու հեղինակի գլուխգործոց երկերից մեկի մասին, բայց միաժամանակ գիտակցելով, որ գրականությունը խորք է, ուստիև տարբեր ժամանակներում այն յուրովի է մեկնաբանվում, ներկա հրապարակման մեջ ջանացել ենք խնդրո առարկա ստեղծագործությունը դիտարկել թարմ ու ժամանակակից հայացքով:

1. Ժանրային առանձնահատկությունները

Գրականությունը արվեստի մյուս տեսակներից տարբերվում է խոսքի մենաշնորհով. գրականությունը խոսքարվեստ է: Մարդկային կյանքի հույզերը, զգացմունքները, սպրումները, հոգեբանության բազմաբնույթ դրսևորումները գրականության մեջ պատկերվում են շարժման և զարգացման ուղեծրով, ինչն էլ ենթադրում է պատմական ճշգրիտ հաջորդականություն: Համաշխարհային գրականության մեջ ժամանակի ընթացքում ձևավորվել և զարգացել են գրական բազմաթիվ ուղղություններ, հոսանքներ, մեթոդներ և գրականագիտական դպրոցներ: Հայ գրականությունն անմասն չէր կարող մնալ այս զարգացումներից: Թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ գրականությունները, որոնք բովանդակում են առհասարակ «հայ գրականություն» հասկացությունը, իրենց կառուցվածքային, գաղափարագեղարվեստական և ժանրային համակարգերով հաղորդակից են համաշխարհային գրական կյանքին:

Հայ նոր գրականության պատմության ստեղծման ճանապարհին կարևոր տեղ են զբաղեցնում ժանրերի տեսական ուսումնասիրության հարցերը: Այդ պատմության ընթացքում ստեղծված յուրաքանչյուր ստեղծագործություն տարբերակվում է ժանրային նրբերանգներով: Անկախ նրանից, թե ուսումնասիրության ինչ մեթոդ է կիրառվում, գրականության պատմությունը հենվում է ժանրի տեսության և պատմության վրա: Ժանրագիտությունը եղել և շարունակում է մնալ գրականագիտության կարևորագույն խնդիրներից մեկը: Ժանրի տեսական քննության հարցի վերաբերյալ գրականագետ Էդ. Ջրբաշյանը կարծում է, որ գրականության պատմության տարբեր փուլերում և տեսական համակարգում ժանրային խնդիրները կարող են լինել ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդական պլանում¹:

Ակնարկային գրականությունը ներառում է տարաբնույթ ժանրատեսակներ, որոնց թվում է նաև նամակագրությունը: Համեմատաբար ավելի «երիտասարդ» այս ժանրը համաշխարհային գրականության պատմության ընթացքում անցել է ձևավորման, զարգացման, կատարելագործման բարդ ճանապարհ: Նամակագրությունը մեծ տարածում գտավ 18-րդ դարի գրականության մեջ, հատկապես **սենտիմենտալիզմի** գրական դպրոցին պատկանող գրողների ստեղծագործություններում: Այս ժանրով ստեղծված գեղարվեստական գրականությունը զուգահեռ լայնածավալ աշխատանք է

¹ Տե՛ս **Ջրբաշյան Էդ.**, Պոետիկայի հարցեր, Եր., «Հայաստան» հրատ., 1976, էջ 93:

կատարվել նաև ակնարկային ժանրերի², մասնավորապես նամակագրության տեսական ուսումնասիրության և ընդհանրացման ոլորտում: Ժանրագիտությունը, հիմք ընդունելով անցյալի ավանդները և նկատի ունենալով ստեղծագործական ընթացիկ միտումները, փորձում է յուրովի համակարգել և մեկնաբանել ակնարկային ժանրերից ամենադյուրաշարժ, խորքային, մտերմիկ ու անկեղծ և տեսական հետազոտությունների առումով ամենաբազմազան ժանրատեսակը՝ **նամակագրությունը**: Այսօրինակ ստեղծագործություններն առավելագույնս աշխուժացան այն շրջանում, երբ անսախաղեպ գարգացում էին ապրում հոգեբանական վեպերը: Գրողները, հաղորդակից դառնալով համաշխարհային փիլիսոփայական մտքի նվաճումներին, իրենց ստեղծագործություններում բարձրաձայնում էին մարդկային հուզաշխարհի՝ հոգեկերտվածք և բարոյականություն ձևավորող թույլ ու գրեթե աննշան բեկբեկումների մասին: Նամակագրական (էպիստոլյար) կառուցվածքը գեղարվեստականացնում էր կենցաղային՝ առաջին հայացքից անկարևոր թվացող երևույթները, մարդկային հույզերը, զգացմունքները, խորհրդածությունները և հոգեբանական բազմաբնույթ դրսևորումները: Համաշխարհային գրականության մեջ լայն տարածում ունեին «նորավեպ նամակահիները», որոնք, ինչպես նկատում է երջանկահիշատակ Գր. Հակոբյանը, «առարկայական հարմարվողական դաշտ ունեին իրադրության, արարքի և անհատի հոգեկերտվածքը առավել «մտերմիկ», ներհուն ուղղորդվածությամբ պատկերագրելու...»³:

Անդրառնանք «Աննա Սարոյանի» ժանրային առանձնահատկություններին: Նար-Դոսը Ստեփան Զորյանի հետ ունեցած առանձին զրույցների ժամանակ իր այս ստեղծագործության մասին ասել է. «Դա իմ առաջին վեպն է: Գրել եմ 21 տարեկան հասակիս: Գրեցի մի շնչով, մի քանի օրվա մեջ, և երբ վերջացրի՝ արցունքներս չէի կարողանում զսպել. լաց էի լինում ժամերով... թվում էր Աննան թունավորված ընկած է առաջիս... այնքան ջղերս թուլացել էին»⁴:

«Աննա Սարոյանը» գրականագիտությանը հայտնի դասական չափանիշներով բնավ չի համապատասխանում վեպի ժանրին. վիպաշարը բավականին պարզ է և աչքի չի ընկնում գործողություններով: Ինչպես հայտնի է, վեպի ժանրն ընդգրկում է տարածաժամանակային ավելի լայն շրջանակ: Այս իմաստով խնդրո առարկա ստեղծագործության մեջ անհամեմատ ավելի դժվար է ստեղծել վիպաշխարհ, որովհետև մարդու հոգեբանության մեջ են տեղի ունենում բախումները: Նար-Դոսը, ունենալով հերոսին և նրա հուզաշխարհը դիտարկելու նրբություն ու հմտություն, իր այս ստեղծագործությամբ զարմանալի հայտնագործություններ է կատարում մարդկային հոգու «տիեզերագիտության» մեջ:

Նամակագրական այս երկը, իսկապես, ուղենշային է. իր ծավալով այն մտո է վիպակին, դեպքերի հանկարծակիությամբ հիշեցնում է նորավեպ,

2 Այս մասին մանրամասն տես **Մարգունի Հ.**, Ակնարկային գրականության ժանրերը, «Գրական ժանրեր, Պատմական զարգացումը և ժամանակակից վիճակը», Եր., «Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատ.», 1973, էջ 397-497:

3 **Հակոբյան Գր.**, Արևմտահայ նորավեպը (1880-1910-ական թվականներ. ժանրի պատմություն և տեսություն), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996, էջ 130:

4 **Զորյան Ստ.**, Երկերի ժողովածու 12 հատորով, հատ. 11, Եր., «Սովետ. գրող» հրատ., 1985, էջ 94:

հերոսների քանակով պատմվածքի ժանրաձևի մեջ է, իսկ «շատախոս» հատվածներով հարում է վեպին: Նորավեպի սեղմ ծավալը ենթադրում է արագ զարգացող դիպաշար, գործողությունների լարված ընթացք ու անսպասելի ավարտ: Ի տարբերություն նորավեպի՝ պատմվածքում գործողությունները համեմատաբար հանգիստ են: Եթե բոլոր նորավեպերը կարելի է համարել պատմվածքներ, ապա յուրաքանչյուր պատմվածք դեռևս նորավեպ չէ: Պատմվածքը քիչ է առնչվում վիպական աշխարհի հետ: Այս իմաստով պատմվածքը զիջում է նորավեպին, այսինքն՝ նորավեպում բնավորությունները անհամեմատ ավելի խորքային տարածության մեջ են, քան պատմվածքում: Այլ խոսքով՝ նորավեպի մեջ ամփոփվում է հոգեբանական անհատակ խորություն և վիպական աշխարհ: Նամակագրական վիպակն ընձեռում է հոգեբանական և ներաշխարհային բազմաթիվ բացահայտումներ անելու հնարավորություններ, իսկ պատմվածքը՝ ոչ: Այս իմաստով վեպի, վիպակի, նորավեպի և պատմվածքի գենետիկական ընդհանրությունները և դրանց սահմանների պայմանական բաժանումը գեղարվեստական հարթության վրա շատ հաճախ հանդես են գալիս միահյուսված՝ ի հայտ բերելով միջժանրային ներհյուսումներ: Սակայն ժանրերի այսպիսի բնութագրերը պայմանական են և, մեղմ ասած, անհամոզիչ, որովհետև այն դեպքում, երբ ստեղծագործությունը խոսում է մարդու ներաշխարհի հետ, այդտեղ ծավալը որևէ էական նշանակություն ունենալ չի կարող: Ասել է թե՛ ստեղծագործության ծավալը քիչ բան է հուշում նրա ընթերցվածության մասին: Բնականաբար, խոսքն այստեղ գրող-ընթերցող «հանդիպման» մասին է: Եթե գրողը դառնում է ընթերցողի հույզերի և զգացմունքների ճիշտ թարգմանը, ապա ստեղծագործության հաջողությունն ակնհայտ է:

Հաշվի առնելով Նար-Դոսի՝ «Աննա Սարոյան»-ին տրված «վեպ» բնորոշումը, ինչպես նաև նրա առանձնահատկությունների դիտարկումները, այնուամենայնիվ, հակված ենք այն տեսակետին, որ Նար-Դոսի վաղ շրջանի այս յուրօրինակ ստեղծագործությունը նամակագրական վիպակ է: Նման ժանրատեսակի կարևորագույն առանձնահատկությունն անկեղծ ու մտերմիկ բնույթն է: Ստեղծագործության հերոսները, այս դեպքում՝ հերոսուհին, իր նամակներում ցուցաբերում է ծայրահեղության հասնող անկեղծություն նախ իր, ապա նամակների հասցեատիրոջ նկատմամբ: Այս իմաստով համոզիչ է այն տեսակետը, ըստ որի՝ առհասարակ նամակագրական գրականությունը մերձենում է քնարերգությանը⁵:

Այս ստեղծագործությունը հագեցած է հոգեբանական հետաքրքիր անցումներով և լուծումներով: Կարելի է ասել՝ Աննա Սարոյանի կերպարը հոգեբանորեն վերածվել է հիմնավորված կերպարի: Նամակագրական վիպակի պատումն ունի շատ յուրօրինակ և հետաքրքիր ոճավորում: Ընթերցողը ստանում է այն իրավացի տպավորությունը, որ նա ընթանում է երկձյուղ՝ Աննա-Հռիփսիմե նամակագրության և Աննա-Գրիգոր երկխոսության ուղղություններով: Նկատելի են նաև անցումներ հերոսուհու ընկալումների միջոցով: Այս դեպքում վիպակի ոճը ձեռք է բերում ավելի սուբյեկտիվ և հուզական ելևէջներ: Այսօրինակ վիպակի ոճական յուրօրինակ կառույցը պայմանավորված է վերոհիշյալ երկու ուղղությունների ներհյուսմամբ:

5 Տե՛ս Մարգուհի Հ., նշվ. աշխատությունը, էջ 399:

ինչպես երևում է, Նար-Դոսի «Աննա Սարոյան»-ը՝ որպես գեղարվեստական փոքր ստեղծագործություն, իր ներքին բովանդակության մեջ ամփոփում է մարդու ներաշխարհը վերափոխող հակասություններով և բախումներով լի վիպաշխարհը: Նամակագրական վիպակը՝ իբրև ժանրատեսակ, ձեռք է բերում կառուցվածքային և տիպաբանական էական հատկանիշներ:

2. Անձնասպանության հոգեբանական անցումները

19-20-րդ դարերի անցումային ժամանակաշրջանի սոցիալ-պատմական կյանքի լուրջ տեղաշարժերը, ինչպես նաև համաշխարհային փիլիսոփայական մտքի նվաճումներն իրենց ուրույն կնիքը թողեցին մարդկության զարգացման պատմության և անհատի հոգեկերտվածքի ու բարոյականության վրա: Այս առումով շոպենհաուերյան դարակազմիկ փիլիսոփայությունը կարևոր տեղ է զբաղեցնում մարդու հոգեբանության և ոչ բանական (իռացիոնալ) զգացողությունների քննության համապատկերում: Իրողությունների պատճառահետևանքային շղթան ընդհանրապես չի գործում հոռետեսական այս փիլիսոփայության մեջ: «Աշխարհն իմ պատկերացումն է»⁶ ձևակերպումն արդեն իսկ ենթադրում է անգիտակցականություն, որովհետև պատկերացումը ըմբռնելի է ոչ թե գիտակցականության, այլ ենթագիտակցության և ներզգայության տիրույթներում:

Նար-Դոսի «Աննա Սարոյանը» տեսանելի է փիլիսոփայական հենց այս համակարգում: Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ այն իր հոգեբանական խորքայնությամբ եզակի ու անգերազանցելի է հայ գրականության համապատկերում: Նամակագրական այս վիպակի հոգեբանական անցումների մեջ Նար-Դոսն աչքի է ընկնում «արվեստի արհեստին» տիրապետելու կարողություններով: Վերջինս չունի հոգեբանական կրթություն և չգիտեր հոգեվերլուծության այն նրբին միջոցներն ու եղանակները, որոնք, շնորհիվ իր ստեղծագործական բնագրի և ներհայեցողության, լավագույն դրսևորումը ստացան այստեղ: Համոզիչ է գրականագիտության կողմից ընդունված այն տեսակետը, ըստ որի՝ ստեղծագործության գլխավոր հերոսը հեղինակի համոզմունքների, ինչպես նաև աշխարհայացքի կրողն է: Այս դեպքում Աննա Սարոյանը կրում է փիլիսոփայական այն ազդեցությունները, որոնք անցումային դարաշրջանում նշանավորեցին Նար-Դոսի գաղափարագեղարվեստական նախասիրությունները⁷:

Գրող-հոգեբանը կերպարների ու միջավայրի համատեղմամբ կարողանում է ամենաբազմազան կողմերից դիտարկել մարդու, տվյալ դեպքում՝ կնոջ հուզաշխարհում ձևավորվող անկումային տրամադրություններն ու զարգացող ողբերգությունը: Առաջին հայացքից թվում է՝ այս հեղինակն իր հերոսուհու բոլոր դժբախտությունները և ձևավորվող կամային թույլ որակները վերագրում է սոցիումի բերած լուրջ հեղաբեկումներին, հին կա-

6 Шопенгауэр А., Мир как воля и представление, Пер. с нем. Ю. И. Айхенвальд, Минск, «Харвест», 2005, с. 34:
7 Նար-Դոսի գրական և փիլիսոփայական գաղափարները իրենց բնականոն հունով զարգանում էին «Նոր-Դարի» ազգային պահպանողական բարոյափիլիսոփայության տիրույթում: Պատահական չէ, որ «Աննա Սարոյանը» առաջին անգամ հատվածաբար տպագրվել է 1888 թ. հենց այս գրական-հասարակական թերթի 75-80, 82-85 համարներում:

ցութաձևի քայքայմանն ու նորի անհեռանկար զարգացումներին: «... Իր ստեղծագործական գլխավոր ուշադրությունը Նար-Դոսը դարձրել է սոցիալական կյանքի հանգամանքների ճշման հոգեբանական հետևանքների վրա»⁸, - գրում է գրականագետ Գ. Հովսեփյանը:

Անտարակույս, գրականագետի այս եզրակացության ակունքները թաքնված են Նար-Դոսի հոդվածներից մեկում⁹: Ուստի վերոհիշյալ տեսակետն ունի ճշմարտության որոշակի չափաբաժին, սակայն դա այնքան էլ համոզիչ չէ, որովհետև Աննայի հոգեկերտվածքային տեղաշարժերը սկսվել էին մինչև կենսական պայմանների փոփոխությունները: Սա բնավ մերկապարանոց հայտարարություն չէ, այլ հերոսուհու ինքնախոստովանությունն է հենց առաջին նամակում. «Ինչո՞ւ նամակ չէի գրում քեզ, - հարցնում եմ և ինքս ինձ: Պատասխանի համար պետք է դիմել այն անհասկանալի գործությանը, որ մարդկային կամքին հակառակ՝ միայն ինքն է զգացմունքների դեկավարը»¹⁰:

Ողբերգական այս նախերգանքի մեջ արդեն իսկ ուրվագծվում են բոլոր այն աղոտ խոհերն ու մտածումները, որոնք իրենց հետագա զարգացման մեջ ոչնչացնելու էին խուճապահար և հուսահատված հերոսուհուն: Աննայի մտորումներն անընդհատ պտտվում են ճշմարտության հայտնաբերման շուրջ, որն ըստ էության ենթադրում է պատճառահետևանքային շղթայի որոնում և գուգակցում: Անմեկնելի ու անբացատրելի պեղծությունները երկակի զգացողություններ են պատճառում աղջկան. «Ուզում ես աղոթել և անիծել, ուզում ես ապրել և մեռնել»¹¹:

Սակայն Աննան շտապում է փարատել ընկերուհուց ակնկալվող կասկածները. «Ոչինչ, բոլորովին ոչինչ չի պատահել ինձ. ես նույնն եմ, ինչպես վերջին անգամ տեսել ես ինձ. ապրում եմ նույն լիության մեջ, ծնողներս, եղբայրներս բոլորը ողջ և առողջ են, և մենք առաջվա նման հաշտ ու սիրով ենք ապրում»¹²: Ըստ էության, սա ընտանեկան երջանկության վայելքն է: Թվում է՝ ամեն բան կարգին է, սակայն ներաշխարհի անկուսակային ու անբացատրելի զարգացումները բոլորովին այլ ազդեցություններ են կանխագուշակում: Նրա հոգեբանության մեջ հետզհետե ակոսվում են ավելի գորշ և մոռյալ երանգներ. «...Այս վերջին ժամանակներս ես ինձ թշվառ եմ զգում՝ առանց մի որևիցե ակնհայտ պատճառի: Կարծես երիտասարդությանս վաղուց արդեն հրաժեշտ եմ տվել, սիրտս կարծես մի անգամից ծածկվել է և էլ հնար չկա բանալու: Ամեն տեղ և ամեն բանից շատ շուտ եմ ձանձրանում: Շատ անգամ այնպես խորասուզվում եմ մտածումների մեջ, որ ամեն բան կատարելապես մոռանում եմ: Բայց թե ինչ եմ մտածում - այդ ես ինքս էլ չգիտեմ. միայն այս գիտեմ, որ ինչ որ մտածում եմ, բոլորը դառն է լինում: Բայց մի բան ես շատ լավ հասկանում եմ ու զգում. - սիրտս ձգտում է, ուժգին թափով ձգտում ինչ որ մի անհայտ, կարծես երբեք գոյություն չունեցող բանի, ձգտում է և, կարծես, հույս չունի, թե երբևիցե կհասնի»¹³:

8 Հովսեփյան Գ., Նար-Դոս, Եր., «Հայպետհրատ», 1961, էջ 245:

9 Հիշյալ հոդվածը մանրամասն տեսնելու համար՝ Նար-Դոս, Երկերի ժողովածու 5 հատորով, հատ. 5, Եր., «Հայաստան» հրատ., 1971, էջ 288-291:

10 Նար-Դոս, Երկերի ժողովածու, հատ. 2, Եր., «Հայաստան» հրատ., 1968, էջ 8:

11 Նույն տեղում, էջ 8:

12 Նույն տեղում, էջ 9:

13 Նույն տեղում, էջ 9-10:

Այս տողերը հաստատում են այն վաղեմի ճշմարտությունը, որ ոչ թե ժամանակն ու տարիքն են որոշում մարդու կենսունակությունը, այլ հոգեբանությունը: Նար-Դոսը քայլ առ քայլ լուսաբանում է Աննայի հոգեբանության անհասկանալի և մութ կողմերը: Նրա տարիքը վաղուց արդեն անէացել է հուզաշխարհի բազմանշանակ երևույթների բովում: Սա կնոջ ներաշխարհում տեղի ունեցող փոփոխությունների ճշգրիտ գեղարվեստականացում է, որը ոչ վաղ անցյալում նկատել էր արևմտահայ նորավիպագրության առաջին ներկայացուցիչը՝ ընթերցասեր հասարակությանը «Օրիորդ Մենիկ» գրական կեղծանվամբ հայտնի Թագուհի Շիշմանյանը՝ Ծերենցի շնորհաշատ դուստրը: Այս վիպագրուհին ապրել էր այդ անցումային տարիքի կյանքը և շատ լավ գիտեր, թե ինչ է տեղի ունենում կնոջ հոգեբանության մեջ: Նա իր նորավեպի համար ընտրել է բավականին հետաքրքրաշարժ սկիզբ. ներկայացնում է գարնան մի պատառիկ և ինքնաբացահայտման շեմին կանգնած արևմտահայ մի աղջկա՝ Սաթինիկ Պերձյանին: Վերջինս նամակ է գրում իր բարեկամուհուն. «Կը պառավնամ, սիրելիս, երկու օր առաջ 20 տարեկան եղա. գեղեցիկ ամսվան մեջ ծնած եմ, անոր համար շատ կը խնդամ, բայց երբեմն կու լամ նաև առանց պատճառի...»¹⁴:

Վերոհիշյալ նամակներով հերոսուհիներն ինքնաբացահայտում են իրենց ներաշխարհը: Սակայն ի տարբերություն Սաթինիկի, որի կերպարը նորավեպի հենց սկզբից գնում է ամբողջացման ճանապարհով, Աննա Սարոյանը, կյանքն ընկալելով փիլիսոփայական տեսանկյունից, ամեն բան ներփակում է հոռետեսական անհիմանալի և անմտածելի ինքնահայեցողության մեջ, որը, ինչպես իրավացիորեն նկատում է Գ. Հովսեփյանը, կտրված չէ կյանքից և չի ներկայացվում վերացական մտքերի ձևով¹⁵: Նամակագրությունը՝ որպես այդպիսին, ենթադրում է անկեղծություն ու ազնվություն առաջին հերթին ինքդ քո նկատմամբ, ապա՝ հասցեատիրոջ: Այս իմաստով Աննան բացառիկ ազնվություն է ցուցաբերում ինքն իր և քրոջը համահավասար ընկերուհու՝ Հռիփսիմեի հանդեպ: «Ես կարծում եմ, որ գլխավոր պատճառը մենակությունս է»¹⁶, բացահայտելով իրեն՝ խոստովանում է Աննան:

Հատկանշական է, որ այս վիպակը «միակողմանի» է, այլ խոսքով՝ միայն Աննա Սարոյանն է գրում իր ընկերուհուն՝ Հռիփսիմեին: Թվում է՝ ամեն բան պարփակված է Աննայի և նրա ընտանիքի շրջանակներում: Սակայն այս հանգամանքը չի խանգարել, որ Հռիփսիմեն և ժամանակի կենսական միջավայրը շարունակաբար երևան դիպաշարի ամբողջության մեջ: Այս բոլորը տեղի է ունենում Աննայի ներաշխարհային որոնումների ու իրականության հակադրության միջոցով: Աղջիկը սկսում է դրսևորել ավելի խորքային մտածողություն: Այս իմաստով՝ համոզիչ է Սո. Թոփչյանի այն տեսակետը, ըստ որի՝ դառը կյանքի հարվածները, հասունացնելով մարդուն, ստիպում են մտածել¹⁷:

Ճիշտ է, Աննայի հոգեկերտվածքը սկսել էր փոխակերպվել մինչև կեն-

14 **Շիշմանյան Թ. (Օր. Մենիկ)**, Երկեր, աշխատասիրությամբ Ա. Մակարյանի, Եր., «Նաիրի» հրատ., 2015, էջ 49:

15 Տե՛ս **Հովսեփյան Գ.**, նշվ. աշխ., էջ 248:

16 **Նար-Դոս**, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 11:

17 Տե՛ս **Թոփչյան Սո.**, Կերպ և իսկություն, Եր., «Սովետ. գրող» հրատ., 1987, էջ 208:

սական պայմանների փոփոխությունները, սակայն Նար-Դոսն ընդգծված երանգներով ցույց է տալիս, որ սոցիումից ստացված ազդեցությունները ևս ներգործում են հերոսուհու (և առհասարակ՝ մարդու) հոգեվիճակի վրա: Հեղինակը նկատում է, որ մարդկային հոգեբանությունը դուրս չէ սոցիալական կյանքի բոլոր հնարավոր դրսևորումների ազդեցությունների դաշտից: Մարդն անընդհատ ճնշվում է հոգաշատ առօրյայի տիրույթներում և անընդհատ կենտրոնանում ներաշխարհի անհասկանալի վերլուծությունների ու անըմբռնելի եզրակացությունների վրա: Աննա Սարոյանի հոգեբանական զարգացումը բերում է բոլորովին այլ խորհուրդ, որը շարունակաբար վրիպում է գրականագետների տեսադաշտից: Մարդը, կամային թույլ որակների պատճառով չդիմանալով սոցիալական կյանքի ճնշումներին, գնում է խեղման ճանապարհով: Նար-Դոսը փիլիսոփայական տեսանկյունից փորձում է հակադրվել այս ընկալմանը: Մարդը՝ իբրև հոգեկերտվածքային տեսակ, ունի հոգեբանական փայլուն որակներ, որոնք սոցիալական դաշտում չեն կարող աղավաղվել ու վերանալ, այլ խնդիր է, եթե մարդն ի սկզբանե ունի կամային թույլ որակներ և անհեռանկար կենսաձև: Սոցիալական հեղաբեկումները կարող են ազդել մարդու վարքաբանության վրա, այլ խոսքով՝ մարդու վարքը կեցության ձևերի մեջ փոփոխություններ կարող է ունենալ, իսկ հոգեբանությունը՝ ոչ: «Դժվարությունը հաղթահարելու անձարակությունն ու անկամությունը ծայրահեղորեն սրում է վատի գաղափարը՝ դարձնելով այն բոլոր գոյությունների համընդհանուր հատկանիշը»¹⁸, - իրավացիորեն նկատում է պրոֆ. Վ. Սաֆարյանը:

Աննա Սարոյանի ինքնասպանությունը, հիրավի, արդարացի չէ, բայց նաև ուղիղ համեմատական չէ նրա բարոյական բնութագրին: Պետք է նկատել, որ սոցիալական ազդեցություններն ու փիլիսոփայական ընկալումները գտնվում են հակադրամիասնության մեջ, այսինքն՝ սոցիումը այդուհանդերձ ձևավորում է ոչ բանական փիլիսոփայության ներհայեցողություն: Հետևաբար Աննան իր ներաշխարհում արդեն կանխատեսել էր բեկումնային այն փոփոխությունները, որոնք լինելու էին իր ընտանիքի հետ. «Գուշակությունս ձիշտ դուրս եկավ. - դժբախտությունը - և այն էլ ինչպիսի դժբախտություն - առաջին անգամ բաց արավ մեր տան դուռն և ներս մտավ՝ այնտեղից այլևս երբեք չհեռանալու համար: Մենք համարյա մի անգամից գրկվեցինք մեր բոլոր կարողությունից, մեր բոլոր հարստությունից... »¹⁹:

Ըստ Շոպենհաուերի՝ յուրաքանչյուրի կյանքի պատմությունը տառապանքի պատմություն է, քանզի յուրաքանչյուրի կյանքի ուղին սովորաբար մեծ ու փոքր ձախտրությունների անվերջ շղթա է²⁰: Սարոյանների ընտանիքի բախտի անհիվը շրջվում է, և սոցիալական կյանքի քայքայիչ ազդեցությունները սողոսկում են հուզաշխարհ: Ողբերգական դեպքերի հաջորդական և փոխկապակցված շղթան, ասել է թե՛ ընտանիքի սնանկանալը, հոր և եղբոր հիվանդությունները, հետագայում նաև վերջինիս մահը փիլիսոփայական վերջավորված ինքնագիտակցման են բերում իրական կյանքի մշտնջենական տառապանքն ու դրան դիմակայելու կամային որակները:

18 Սաֆարյան Վ., Գրողի և կերպարի անհատականությունը, Եր., «Մակմիլան-Արմենիա» հրատ., 2001, էջ 201:

19 Նար-Դոս, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 22-23:

20 Տես Illoneurayap A., նշվ. աշխ., էջ 523:

Աննայի հուզառատ ճակատագիրը հայտնվում է մարդու ձեռքով ստեղծված օրենքների և արժեհամակարգի խաչմերուկում: Այստեղ աղջկա հոգեկերտվածքի, խոհերի ու մտածումների դրսևորման կերպերը, զուգակշռվելով կյանքի և մահվան առեղծվածին, հանգուցալուծվում են շոպենհաուերյան փիլիսոփայության համապատկերում. «Միթե մարդուս կյանքը, որ վերջանում է ոչնչով, նրա խորհուրդը պետք է լինի նույնպես ոչինչ...»²¹:

Ուշագրավ է, որ Աննան ընտանիքի անդամներից ավելի շատ գրուցում է եղբայրներից մեկի՝ Գրիգորի հետ: Իրենց տարիքին անհամապատասխան այս գրույցների արդյունքում ուրվագծվում են վերջինիս բնավորության և հոգեբանության հատկանիշները: Կյանքի և մահվան սահմանին հայտնված քսանամյա եղբայրը խորապես հասկացել է մարդու գոյության խորհուրդը: Ըստ Աստվածաշնչի՝ մարդու կյանքի գլխավոր առանցքը պատվում է եռամիասնության շառավղով. «Ապա ուրեմն մնում է հաւատք, յոյս, սէր. այս երեքը, և սորանցից մեծը սէրն է»²²:

Եղբայրը չի ուզում, որ երիտասարդ քույրը մի վայրկյան անգամ կասկածի բնության արարչությանն ու գոյության օրենքներին, որովհետև իր ապրած տարիների ընթացքում տղան հստակ բանաձևով է ընկալել կյանքի թվացյալ բարդ, բայց իրականում ավելի քան պարզագույն խորհուրդը. հավատը հույս է, իսկ հույսը – կյանք²³: Մարդու գոյության այս հիմնասյուների իսպառ ոչնչացումը Աննային ստիպում է հաշտվել ստեղծված թշվառ ու անհեռանկար վիճակի հետ. «Ես արդեն վերջնականպես հաշտվել եմ դրությանս հետ, ներկան ինձ այնպես սարսափելի չի թվում, ինչպես երևակայում էի առաջ»²⁴:

Դիտելի է, որ Նար-Դոսն ուղղակիորեն ակնարկում է նաև այն գրականության մասին, որն ի դեմս Աննա Սարոյանի և Գրիգորի՝ կարդում էին ժամանակի առաջադեմ ընթերցողները: Այս վիպակում նկատելի են **միջտեքստային** հատվածներ: Դարի առաջադեմ զարգացումները արվեստի և մշակույթի ասպարեզում ի հայտ են բերում նոր որակներ և հատկանիշներ: Ընդհատ է, ինտերտեքստ²⁵ (միջտեքստայնություն) եզրույթը բավականին երիտասարդ է, բայց երևույթը՝ որպես այդպիսին, ունի հին պատմություն: Միջտեքստայնության²⁶ արմատները հասնում են մինչև անտիկ շրջանի գրականություն: Այսպիսի հատվածների կիրառություններն իրենց ազդեցությունները կարող են թողնել տվյալ ստեղծագործության ինչպես գաղափարական, այնպես էլ գեղարվեստական առանձնահատկությունների վրա:

Ուշադրություն դարձնենք Աննայի կարդացած գրականության անցումներին: Խաղաղ ու անհոգ օրերին աղջիկը կարդում է Ի. Տուրգենև: Սակայն միշտ չէր, որ նրա ներաշխարհը խաղաղ էր. ներքին մի տագնապ կար նրա հոգեբանության մեջ: Հավատն ու սերը սկսում էին նահանջել. կատարվում

21 Նար-Դոս, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 26:

22 Աստուածաշունչ Մատեան Հին և Նոր կտակարանների եբրայական և հունական բնագիրներից թարգմանությամբ, Ա Թուրք առ Կորնթացիս, 13:13, Աստվածաշնչի թարգմանության ինստիտուտ, Ստոկհոլմ, 1989:

23 Տես Նար-Դոս, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 43:

24 Նույն տեղում, էջ 60:

25 Եզրույթն առաջին անգամ կիրառվել է ֆրանսիական փիլիսոփա, հետկառուցվածքաբանության տեսաբան Յուլյա Կրիստևայի կողմից 1967 թ.:

26 Այս մասին մանրամասն տես Քալանթարյան Ժ., Միջտեքստայնություն, «Գրականության տեսության արդի խնդիրներ», ուսումնական ձեռնարկ, Եր., ԵՊՀ հրատ., 2016, էջ 136-153:

է շրջադարձ, մնում է միայն մահվան փիլիսոփայությունը, որից հետո Աննան կլանվում է Ֆ. Դոստոևսկու գրականությամբ: Գրիգորի նախասիրությունները այլ են. նա ընթերցում է Ֆ. Շիլլերի «Դոն Կարլոսը»: Տարաբնույթ հեղինակների հիշատակությունն այստեղ ինքնանպատակ չէ. հեղինակը միջտեքստայնության միջոցով կատարում է իրար ժխտող հարաբերությունների քննություն և հերոսների՝ կենսականի ու մահվան ընկալումները տանում է տեսակների հաշտեցման ճանապարհով:

Նար-Դոսը քաջածանոթ էր ռուս գրականության անցուդարձերին և գրական զարգացումներին: Այլ խոսքով՝ Ֆ. Դոստոևսկու գրական ազդեցությունները չէին կարող չանդրադառնալ Նար-Դոսի ինչպես այս, այնպես էլ մյուս ստեղծագործությունների վրա: «Եթե մի գրականություն ինձ վրա խոր և անջնջելի տպավորություն է գործել, այդ այն ժամանակվա ռուս գրականությունն էր, հանձինս Տուրգենևի, Դոստոևսկու, Գոնչարովի, Տոլստոյի, որոնց երկերից օգտվել եմ գրվածքներս հոգեբանորեն հիմնավորելու տեսակետից»²⁷, - անկեղծանում է Նար-Դոսը:

Ինքնասպանության գաղափարի և թեմայի տեսանկյունից հատկանշական է Ֆ. Դոստոևսկու «Երկու ինքնասպանություն» էսսեն: Առաջին հայացքից թվում է՝ տասն ամիս տարբերությամբ կատարվող խորհրդավոր և հանելուկային ինքնասպանությունները չեն աղերսվում միմյանց: Սակայն երևույթի խորքային քննությունն ի հայտ է բերում զարմանալի ընդհանրություններ նույն իրողության տարբեր դրսևորումների միջև: «Ես, ինչը հատուկ է մարդկային էությանը, անշուշտ, փորձեցի այդ հանելուկն ինչ-որ ձևով լուծել, որպեսզի կարելի լինի ինչ-որ տեղ «կանգ առնել և հանգստանալ»»^{28*}, - գրում է Դոստոևսկին:

Հարցադրման մեջ ռուս գրողն իրավացի է: Ինչին է ուղղված վիրավորանքն ու չարությունը, որը նկատվում է ինքնասպանություն գործելու նախաշեմին: Միամտություն կլինի կարծել, թե մարդը, միայն նյութական պատճառներից ելնելով, կարող է ինքնասպանություն գործել: Ըստ էության, մարդկային ներաշխարհում, բացի նյութականի ընկալումից, տեղի են ունենում նաև այնպիսի փոփոխություններ, ինչպիսիք են «ցուրտ խավարը և ձանձրույթը», որոնք անդառնալիորեն վերափոխում են մարդու հոգեկերտվածքը: Ռուս գրականության այդ երևելին իր հոգեվերլուծական բնագոյով կարողացել է փոքր ծավալի ստեղծագործության մեջ երկու իրարից տարբեր դեպքերի վերլուծությամբ բացահայտել առհասարակ ինքնասպանության հիմքում ընկած ընդհանուր գաղափարի և ընկալման, ինչպես նաև դրա իրագործման դրդիչ հանգամանքները: «Պարզապես ապրելն անհնար է դարձել»^{29*}, - եզրակացնում է գրող-հոգեբանը:

Ճիշտ է, Դոստոևսկին սկզբում այնքան էլ համակրելի հեղինակ չէր Աննա Սարոյանի համար. նա ուղղակիորեն ասում է, որ ինքն այդ գրողին երբեք չի սիրել³⁰: Սակայն աղջկա հոգեբանության հետագա զարգացումը

27 Նար-Դոս, Երկերի ժողովածու, հատ. 5, էջ 288:

28 Достоевский Ф. М., Полное собрание сочинений в тридцати томах, Публицистика и письма, Тома XVIII-XXX, Том Двадцать третий, Дневник писателя за 1876 год, май-октябрь, Ленинград, издательство «Наука», Ленинградское отделение, 1981, с.145. *Эту загадку я, по свойству человеческой природы, конечно, постарался как-нибудь разгадать, чтоб на чем-нибудь «остановиться и успокоиться».

29 Նույն տեղում, էջ 146: * Просто стало нельзя жить.

30 Տես Նար-Դոս, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 38:

դարձ է կատարում ի շրջանս յուր: Թվում է՝ շեղում կա կյանքի նորմից, բայց մարդկային էությունները չունեն նույն բաղադրությունները: Ինչքան էլ հասարակական հարաբերություններն իրենց ազդեցությունը թողնեն մարդու ապրելակերպի վրա, այդուհանդերձ, ներքուստ գոյություն ունի մարդկային անխաթար հոգեբանության, կամքի (կամ թույլ, կամ ուժեղ), բնավորության և խառնվածքի խնդիր, որը պայմանավորված չէ արտաքին հանգամանքներով և իր վրա չի կրում դրանց ազդեցությունները, այսինքն՝ դրանք դուրս են հասարակության պարտադրանքների դաշտից: Ահա այս առումով Աննան դուրս է ընդհանուր կյանքի այն համակարգված շրջանակից, որն ստեղծել է մարդկությունը, և որը երբևէ չի համապատասխանում մարդու սրտի և հոգու ձգտումներին:

Եղբոր վաղահաս մահը ևս ազդում է Աննայի հուզաշխարհի վրա: Նրա՝ կյանքի նկատմամբ ունեցած փիլիսոփայական հայացքները ձեռք են բերում ավելի գորշ երանգներ: Չնայած նրան, որ եղբայրը պատվիրել էր անընդհատ աղոթել և ապավինել Աստծուն, Աննան շարունակում էր որոնումները մետաֆիզիկական տիրույթներում: Նրա համար աղոթքն այլևս ոչինչ էր, որովհետև գոյությունն արդեն իսկ անիմաստության էր վերածվել. «...ներսս կատարյալ դատարկություն է տիրում: Ոչինչ չկա, ոչ մի հիմնավոր բան, որից կարողանայի ամուր կպչել՝ չանհետանալու համար, որի վրա կարողանայի վերջնականապես կենտրոնացնել թափառող մտքիս ընթացքը՝ չնուլրվելու համար»³¹:

Թեև հայ և ռուս հեղինակների հերոսուհիների ինքնասպանության ակունքներն ունեն տարաբնեռ կենտրոնացումներ, այդուհանդերձ այս տողերը գալիս և զուգակշռում են Դոստոևսկու «ապրելու անհնարինության» գաղափարը: Առհասարակ մարդն ամբողջ կյանքում խուսափում է փորձությունից, սակայն երբ փորձությունը գալիս է, մարդն այդտեղ երկու տարբերակ ունի՝ կամ հաղթահարել այն, կամ կործանվել դրա ճանապարհին: Աննա Սարոյանն ամեն ձիգ գործադրում է ինքնասպան լինելու աղոտ մտքից ազատվելու համար, որովհետև չէր ուզում մեղանչել իր անձի և, իհարկե, ընտանեկան հարկի առաջ: Սակայն «անհասկանալի զորությամբ» նա ինքնասպան է լինում: Արդարացի է սա, թե ոչ՝ դժվար է ասել: Արդյոք սոցիոման էր մեղավոր, թե՛ կյանքի նկատմամբ ունեցած փիլիսոփայական ընկալումները՝ դժվար է ասել: Կյանքը մարդուն տարել է փորձության, իսկ վերջինս չի դիմացել դրան:

Պայքարի մեջ կարևորն ու առաջնայինը բնավ հաղթելը չէ, այլ չպարտվելը: Կյանքը, դնելով իր ուղղորդիչ նշանները, շարունակաբար կոտրում է կամային թույլ որակներով օժտված մարդուն:

Եզրակացություններ

Թարմ դիտարկումների արդյունքում եկել ենք հետևյալ եզրակացություններին.

Նամակագրական այս վիպակը թեև գտնվում է միջժանրային տիրույթում, սակայն իր գրական-պատմական արժեքով և հոգեբանական ան-

³¹ Նույն տեղում, էջ 58:

ցումների իմաստով կարևոր տեղ է զբաղեցնում հայ գրականության երկնակամարում: Նար-Դոսի «Աննա Սարոյանը» իր առավելություններով և թերություններով հանդերձ բացառիկ քննության է ենթարկում տարաբնույթ ազդեցությունների խաչմերուկում հայտնված մարդու հոգեբանությունը և կամային հատկանիշները:

Ստեղծագործության հոգեբանական խորքայնությունը, ինչպես նաև անցումները տեսանելի և քննելի են Շոպենհաուերի փիլիսոփայության համակարգում: Այն գալիս է հաստատելու, որ անկախ արտաքին հանգամանքների ազդեցություններից՝ մարդու հոգեբանության մեջ տեղի են ունենում զարմանալի երևույթներ: Վիպակի տարաբնույթ դիտարկումները՝ անձնասպանության փիլիսոփայական դիտակետով ակնհայտ են դարձնում, որ Նար-Դոսը գիտական որոշակի ոճավորմամբ է ուսումնասիրում մարդու հոգեբանական զարգացումները:

Ներաշխարհի անհասկանալի վերլուծությունները մարդուն մեկուսացնում են հոգսաշատ առօրյայի տիրույթներից: Ըստ հեղինակի՝ սոցիալական հեղաբեկումները ներգործում են մարդու ոչ թե հոգեբանության, այլ վարքաբանության վրա: Կամային թույլ որակներ և անհեռանկար կենսաձև ունեցող մարդիկ անխնա կործանվում են կյանքի փորձության ձանապարհին: Ուստի առաջին պլանում արծարծելով հոգեբանական և սոցիալական խնդիրներ՝ Նար-Դոսը ստեղծել է այնպիսի վիպակ, որը տարիների հեռավորությունից դեռ պահպանում է իր արդիական հնչեղությունը:

Տաթևիկ Հ. Մերջանյան – գրականագետ, 5 հոդվածի հեղինակ, զբաղվում է հայ նորավիպագրության հարցերով, գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայ նոր գրականության և արևմտահայ գրականության բնագավառները:

Summary

PHILOSOPHICAL SELF-DETERMINATION OF SUICIDE

In the epistolary novelette by Nar-Dos “Anna Saroyan”

Tatevik H. Merjanyan

Key words – suicide, psychoanalysis, introspection, psychology, lifestyle, will qualities, self-revelation, epistolary novelette, hagiography, intertextuality.

The aim of the given publication is to study and evaluate the epistolary novelette by Nar-Dos “Anna Saroyan”. Here the most interesting thing is that in this considered work the author observes psychologically deep and divergent phenomenon. In the study the philosophical idea of suicide is crucial. It concludes that Nar-Dos has directly spoken about the turbulences taking place in person’s introspective world that have little or almost nothing to do with the outer circumstances.

ФИЛОСОФСКОЕ ВОСПРИЯТИЕ САМОУБИЙСТВА

в эпистолярной повести Нар-Доса «Анна Сароян»

Татевик А. Мерджанян

Ключевые слова – самоубийство, психоанализ, саморефлексия, психология, жизненный уклад, произвольные качества, самопознание, эпистолярная повесть, агиография, интертекстуальность.

Целью настоящей публикации является исследование и оценка с новой точки зрения эпистолярной повести Нар-Доса «Анна Сароян». Особенно примечательно, что автор анализируемой повести рассматривает многообразные глубокие психологические явления. Стержнем исследования является философская идея самоубийства. Мы приходим к выводу, что Нар-Дос непосредственно говорит о происходящих во внутреннем мире человека волнениях, которые совершенно либо почти не связаны с внешними обстоятельствами.

REFERENCES

1. **Astvatsashunch, A** Tught ar Korntacis, 13:13, Stokholm, 1989. **(In Armenian)**
2. **Dostoevskiy F. M.**, Polnoye sobraniye sochineniy v tridcati tomakh, Tom dvadcat' tretiy, Dnevnik pesatelya za 1876 god, may-oktyabr, Leningrad, Izdatelstvo «Nauka», Leningradskoye otdelenie, 1981. **(In Russian)**
3. Grakanutyan tesutyun ardi khndirner, Ye., «EPH» hrat., 2016. **(In Armenian)**
4. **Hakobyan Gr. J.**, Arevmtahay noravepy (1880–1910–akan tvakanner. janri patmutyun yev tesutyun), Ye., HH GAA «Gitutyun» hrat., 1996. **(In Armenian)**
5. **Hovsepyan G. Y.**, Nar-Dos, Ye., «Haypethrat», 1961. **(In Armenian)**
6. **Jrbashyan Ed. M.**, Poetikayi harcer, Ye., «Hayastan» hrat., 1976. **(In Armenian)**
7. **Jrbashyan Ed. M.**, Panyan Yu., Grakan janrer, Patmakan zargacumy yev jamanakacic vijaky, Ye., «Haykakan SSH Gitutyunneri akademiayi hrat.», 1973. **(In Armenian)**
8. **Nar-Dos**, Yerkeri joghovatsu 5 hatorov, h. 5, Ye., «Hayastan» hrat., 1971. **(In Armenian)**
9. **Nar-Dos**, Yerkeri joghovatsu, h. 2, Ye., «Hayastan» hrat., 1968. **(In Armenian)**
10. **Safaryan V. H.**, Groghi yev kerpari anhatakanutyuny, Ye., «Makmilan-Armenia» hrat., 2001. **(In Armenian)**
11. **Shishmanyant T.**, (Or. Menik), Yerker, Ashkhatahirutyamb Al. Makaryani, Ye., «Nairi» hrat., 2015. **(In Armenian)**
12. **Shopenhauer A. F.**, Mir kak volya i predstavleniye, Minsk, «Kharvest», 2005. **(In Russian)**
13. **Topchyan St. E.**, Kerp yev iskutyun, Ye., «Sovet. grogh» hrat., 1987. **(In Armenian)**
14. **Zoryan St. Y.**, Yerkeri zhoghovatsu 12 hatorov, h. 11, Ye., «Sovet. grogh» hrat., 1985. **(In Armenian)**